ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1959 Общественные науки

Ե. Ս. Մարգարյան

# ԱՌՆՈԼԴ ԹՈՅՆԲԻԻ ԼՈԿԱԼ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

*Պայքարը ռեակցիոն բուրժուական փիլիսոփայության դեմ մարքսիստական հասարակագիտության կարևորագույն խնդիրներից է։ ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարը նորից ամբողջ սրությամբ ընդգծեց բուրժուական կոնցեպցիաների հետևողական մերկացման անհրաժեշտությունն ու խոշոր նշանակությունը, կոնցեպցիաներ, որոնք աղավաղում են հասարակական զարգացման բնույթը։*

*Այդ կապակցությամբ խիստ ուշադրության են արժանի ոչ այնքան բուրժուական պրոպագանդայի ամբողջությամբ կեղծ և աղմկարար ելույթները, որքան մեռնող կապիտալիզմի ապologետների այն թեորիաները, որոնք կապիտալիզմի գովերգությունը հրամցնում են «օբյեկտիվիզմի» ավանդական դիմակի տակ։ Մեր օրերում այդպիսի թեորիաների օրինակ է հանդիսանում Թոյնբիի հայտնի պատմա-փիլիսոփայական կոնցեպցիան։*

*Ահա արդեն ավելի քան 10 տարի է, ինչ Արևմուտքում աշխույժ բանավեճ է գնում անգլիացի պատմաբան և սոցիոլոգ Առնոլդ Թոյնբիի հիմնական աշխատության՝ 10 հատորանոց «Պատմության հետազոտություն» («A Study of History») գրքի շուրջը։*

*Եթե 40-ական թվականների սկզբներին Թոյնբին միայն մասնագետների նեղ շրջանին էր հայտնի, ապա համաշխարհային երկրորդ պատերազմից հետո նրա անունը լայն ճանաչում գտավ։ Մեր օրերում Թոյնբին նույնքան, եթե ոչ ավելի, գրական հաջողություն է ձեռք բերել, որքան որ ուներ Օսվալդ Շպենգլերը 20-ական թվականներին՝ իր «Եվրոպայի մայրամուտը» աշխատությունը հրապարակելուց հետո։ Սկզբից նշենք, որ Թոյնբիի և Շպենգլերի միջև անցկացրած այդ զուգահեռը խորապես հիմնավորված է։*

*Թոյնբիի և Շպենգլերի աշխատությունները համանման են ոչ միայն իրենց հոռետեսական բնույթով, այլև իրենց հիմնական տեսական-դաղափարական բովանդակությամբ։ Ինքը՝ Թոյնբին ամենևին էլ չի ժխտում իր տեսական մոտիկությունը Շպենգլերին, նա միայն առարկում է այն ծայրահեղ եզրակացությունների դեմ, որ անում էր Շպենգլերն իր տեսությունից, ինչպես նաև առարկում է նրա ապացուցման որոշ մեթոդների դեմ[1]։*

*Շպենգլերն իր գրքում, ինչպես հայտնի է, հետևողական կերպով հանդես էր գալիս պատմության տրադիցիոն պերիոդիզացիայի դեմ, մշակված պատմագիտական հասկացությունների՝ համաշխարհային պատմության միասնության և համաշխարհային-պատմական զարգացման հասկացությունների դեմ։ Շպենգլերի ամբողջ գրքի մեջով կարմիր թելի պես անցնում է այն հիմնական դաղափարը, թե համաշխարհային պատմությունը սոսկ զուգահեռ, լոկալ*

---

[1] *Տե՛ս, օրինակ՝* A. Toynbee, Civilization on Trail, N. Y., 1948, p. 10.

կուլտուրաների մի գումար է, կուլտուրաներ, որոնք, ինչպես բիոլոգիական օրգանիզմները, ծնվում են, ծաղկում ու ոչնչանում։ Իրենց բովանդակությամբ անհատականորեն-անկրկնելի հանդիսացող այդ կուլտուրաներին միավորում է միայն նրանց գոյության խիստ սահմանագծված պարբերաշրջանը։

Մինչև այժմ պահպանված կուլտուրաների, այն է՝ չինական, հնդկական, արաբական և այլ կուլտուրաների շարքում միայն արևմտաեվրոպական կուլտուրան է, որը, Շպենգլերի կարծիքով, դեռևս պահպանել է իր ստեղծագործական ուժերը, բայց որը նույնպես արդեն թևակոխել է իր մայրամուտի ստադիան։

Շատ համառոտ կերպով այս է Շպենգլերի պատմա-փիլիսոփայական կոնցեպցիայի բովանդակությունը, որ նա ստեղծել էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Բացելով Առնոլդ Թոյնբիի «Պատմության հետազոտություն» աշխատության 1-ին հատորը, որը նույնպես սկսվում է պատմության վերաբերյալ եղած «տրադիցիոն պատկերացումների» քննադատությամբ և տվյալ աշխատության հիմնական հասկացությունների սահմանումով, մենք անմիջապես տեսնում ենք այն սկզբունքային նմանությունը, որ կա նրա և Շպենգլերի միջև, հիմնական հարցերի արծարծման ու լուծման ասպարեզում։

«Քաղաքակրթության միասնության թեզիսը խոր մոլորություն է, որի մեջ ընկել են արևմտյան պատմաբանները սոցիալական շրջապատի միջավայրի ազդեցության տակ»,—հայտարարում է Թոյնբին, հանդես գալով «պատմության միասնությունը» պաշտպանող երեք տեսությունների, այն է՝ 1) էգոցենտրիկ պատրանքի, 2) չփոփոխվող Արևելքի մասին եղած պատրանքի և 3) ուղիղ, վերընթաց գծով տեղի ունեցող պրոգրեսի պատրանքի դեմ։

Թոյնբիի կարծիքով, միանգամայն սնանկ է նաև պատմական պրոցեսի եռանդամ պերիոդիզացիան։ «Հին աշխարհ + միջին դարեր + նոր ժամանակ» ֆորմուլան,— մատնանշում է նա,— սխալ է, այն պետք է փոխարինել մի այլ՝ «հունա-հռոմեական աշխարհ + արևմտյան աշխարհ» ֆորմուլայով»։

Համաշխարհային-պատմական պրոցեսի նկատմամբ Թոյնբիի ունեցած այդ տեսակետը նրան, ինչպես և Շպենգլերին, անխուսափելիորեն հանգեցնում է լոկալ քաղաքակրթությունների «միաժամանակության» ու «համարժեքության» թեզիսին։ Այդ կոնցեպցիան նա հետևյալ կերպ է հիմնավորում՝ «Այն, ինչ մենք պատմություն ենք անվանում, քաղաքակիրթ հասարակության մեջ ապրող մարդու պատմությունն է, բայց եթե պատմություն ասելով հասկացվում է մարդու կյանքի ամբողջ ժամանակաշրջանը երկրագնդի վրա, ապա մենք զտնում ենք, որ դրա համեմատությամբ քաղաքակրթության դարաշրջանն ընդամենը 2 % է գրավում։ Ուստի մենք կարող ենք պնդել, որ մեր 21 քաղաքակրթությունները փիլիսոփայական իմաստով դերադասորեն ժամանակակից և համարժեք են»[3]։ Ի տարբերություն Շպենգլերի, որը 8 բարձրագույն կուլտուրա է ընդունում, Թոյնբին քաղաքակրթությունների թիվը հասցնում է 26-ի, որոնցից 5-ը (պոլինեզիական, էսկիմոսական, նոմադական, օտտոմանյան և Սպարտայի) նա առանձնացնում է որպես իրենց զարգացման մեջ կանգ առած (arrested) քաղաքակրթություններ։

---

[2] A. Toynbee, A study of history, Abridg. of vol. I—VI, p. 37.

[3] Նույն տեղում, էջ 43։

Մարդկության պատմության վերլուծման նկատմամբ Շպենգլերի և Թոյնբիի մոտեցման հիմնական սկզբունքների ընդհանրությունը մեզ, իհարկե, դեռևս հիմք չի տալիս ամբողջապես նույնացնելու նրանց կոնցեպցիաները։ Թոյնբիի պատմա-փիլիսոփայական տեսությունը նախ և առաջ ստեղծվել է երկու սիստեմների գոյության ու պայքարի պայմաններում, որը չէր կարող իր խոր դրոշմը չթողնել նրա վրա։ Ամբողջապես ընդունելով այժմ գոյություն ունեցող բոլոր քաղաքակրթությունների, բացառյալ արևմտաեվրոպական քաղաքակրթության, ստեղծագործական մահացման շպենգլերյան թեզիսը, նա միևնույն ժամանակ փորձում է Արևմուտքի պատմական ճակատագիրը որոշելիս խուսափել շպենգլերյան ֆատալիզմի ծայրահեղություններից, ընդ որում նա Արևմուտքը նույնացնում է կապիտալիզմի հետ։

Այսպես, իր քննադատներից մեկին, հոլանդացի սուբյեկտիվիստ պատմաբան Դեյլին տված իր պատասխանում նա ասում է. «Ես չեմ հավատում, թե պատմությունը կարելի է օգտագործել ապագան գուշակելու համար։ Ես կարծում եմ, որ պատմաբանը կարող է նշել միայն զարգացման որոշ հնարավորությունը կամ նույնիսկ հավանականությունը, բայց ոչ երբեք կոնկրետ ընթացքը։

Շպենգլերյան դոգմատիկ դետերմինիզմի տխուր փորձից խրատված, ես իմ կողմից միշտ էլ զգույշ կլինեմ մեր քաղաքակրթության ապագան գնահատելիս, որպես առկախ հարց, ոչ այն պատճառով, որ ես վախենում եմ պախարակումից, այլ լոկ այն պատճառով, որ ես նույնպես խորապես, որքան և դուք, Դեյլ, հավատացած եմ, դա առկախ հարց է»[4]։

Այնուհետև պետք է նշել Թոյնբիի ու Շպենգլերի կոնցեպցիաների մի ուրիշ տարբերություն ևս։ Եթե Շպենգլերի մոտ տեսական դրույթները մեծ մասամբ դեկլարատիվ են, ապա Թոյնբին փորձում է դրանք հիմնավորել պատմական առատ փաստարկումներով։ Նա, մեծ էրուդիցիայի տեր լինելով, իր աշխատության մեջ հսկայական պատմական նյութ է օգտագործում, փորձելով հաստատել իր յուրաքանչյուր տեսական դրույթը։ Այդ հանգամանքը չի կարող անտեղյակ ընթերցողների մեջ այնպիսի տպավորություն չառաջացնել, թե նրա պատմա-փիլիսոփայական դրույթներն իբր թե օբյեկտիվ և կոնստրուկտիվ են։

Բացի դրանից, նրա կոնցեպցիան պրոգրեսիվ տրամադրված բուրժուական շատ ընթերցողների գրավում է նաև նրանով, որ նա խիստ կերպով հանդես է գալիս ռասիզմի դեմ, ինչպես և հասարակական երևույթների բիոլոգիական մեկնաբանման դեմ։ Այս ամենը Թոյնբիին շատ ավելի լուրջ ու վտանգավոր հակառակորդ է դարձնում մեզ համար, քան, ասենք, Շպենգլերն էր, կամ թե խիստ ռեակցիոն դիրքերում կանգնած բուրժուական շատ ուրիշ տեսաբաններ։ Ուստի և մեր օրերի գաղափարական պայքարի պայմաններում Թոյնբիի կոնցեպցիայի հետևողական մարքսիստական քննադատական վերլուծությունը առաջնահերթ կարևորություն է ներկայացնում։

Մարքսիստական գրականության մեջ, մասնավորապես մեզ մոտ՝ Սովետական Միությունում արդեն լույս են տեսել Թոյնբիի պատմա-փիլիսոփայության ընդհանուր գնահատականին նվիրված մի շարք հոդվածներ, որոնցում

---

[4] The pattern of the past: can we determine it? by P. Geyl, A. Toynbee and P. Sorokin, N. Y., L., 1949, p. 130.

ընդհանրապես ցույց են տրված նրա կոնցեպցիայի գիտական սնանկությունն ու ռեակցիոն բնույթը[5]։

Թոյնբիի կոնցեպցիայի հիմնական տեսական հասկացությունը լոկալ անհատական-անկրկնելի քաղաքակրթության հասկացությունն է։ Եվ հենց տվյալ հասկացության և նրա համար որպես հիմք ծառայած հետազոտության իդեալիստական մեթոդների մանրամասն վերլուծությունը պետք է մեկնակետ հանդիսանա Թոյնբիի պատմական սիստեմի քննադատության հարցում, և այդպիսի վերլուծությունը մեզ կօգնի ոչ միայն նրա տեսության դեմ, այլև արդի բուրժուական մյուս առավել ազդեցիկ պատմական կոնցեպցիաների դեմ մղվող պայքարում։

Թոյնբիի կոնցեպցիայում հետևողական կերպով ժխտվում է համաշխարհային-պատմական առաջընթաց զարգացման գաղափարը, որը XIX դարի բուրժուական պատմագրության հիմնական գաղափարն էր, չնայած նրա բոլոր թերություններին։ Իսկ ինչպե՞ս, ինչի՞ հետևանքով կարող էր երևան գալ ժամանակակից գիտության եզրակացություններին հակասող այդպիսի մի կոնցեպցիա և ինչու՞ նա այդքան մեծ ազդեցություն ունի Արևմուտքում։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ տվյալ տեսության հեղինակներն ամեն կերպ ճգնում են ապացուցել, թե արդի պատմական գիտության նվաճումներն ամենալրիվ կերպով արտահայտված են այդ տեսության մեջ, ճգնում են հավատացնել ընթերցողներին, թե իրենց տեսակետը լիովին համապատասխանում է գիտության հիմնական հետևություններին։

Հատկապես XIX դարի երկրորդ կեսում տեղի ունեցած պատմական գիտելիքների բուռն աճը անշուշտ որոշ դեր է խաղացել բուրժուական նորագույն պատմա-փիլիսոփայական կոնցեպցիաների հանդես գալու հարցում, բայց ինչպե՞ս և ի՞նչ չափով, ահա այս է հարցը։

Պատմական գիտության նորագույն նվաճումներն անառարկելի կերպով ապացուցեցին այն փաստը, որ արևելյան ժողովուրդները մեծ դեր են խաղացել մարդկության ընդհանուր զարգացման մեջ։ Այդ ամենը չէր կարող չհանդեցնել բուրժուական տրադիցիոն եվրոպացենտրիզմի ճգնաժամին։ Այլևս ոչ մի կերպ չի կարելի թաքցնել այն բացահայտ ճշմարտությունը, որ Արևմտյան Եվրոպայի պատմությունը, Հնդկաստանի, Չինաստանի, Արաբական Արևելքի և այլ երկրների պատմության հետ միասին, համաշխարհային-պատմական պրոցեսի ճյուղավորումներից մեկն է միայն։ Եվ ահա այդ փաստը խիստ աղավաղված ձևով հիմք է ծառայել XX դարի բուրժուական շատ պատմա-փիլիսոփայական կոնցեպցիաների համար։

Միայն մարքսիզմը, զինված լինելով դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդոլոգիայով, կարողացավ պատմական գիտելիքների հաջողությունները օգտագործել հասարակական զարգացման իսկական գիտական կոնցեպցիա ստեղծելու համար։ Իսկ բուրժուական գիտության մեջ համաշխար-

[5] Տե՛ս Ե. Կոսմինսկու «Ա. Թոյնբիի պատմասիրությունը» („Вопросы истории", № 1, 1957), Է. Արարատյանի «Ա. Ջ. Թոյնբիի պատմա-փիլիսոփայությունը» („Вопросы философии", № 4, 1955) և «Ա. Թոյնբիի կուլտուր-պատմական կոնցեպցիայի քննադատությունը» („Вестник истории мировой культуры", № 4, 1957) հոդվածները, ինչպես նաև մեր «Հասարակական շրջապատի կոնցեպցիան պատմա-փիլիսոփայության մեջ» «Կուլտուր-պատմական իմացության մեջ համեմատական մեթոդի նշանակության մասին» հոդվածները („Вестник истории мировой культуры", № 24, 1957)։

հայրին-պատմական պրոցեսի մասին եղած հին պատկերացումների հեղաբեկումը, եթե նկատի ունենանք նաև նրա առավել ռեակցիոն ներկայացուցիչների դասակարգային դիրքերը, շատ հաճախ այն հետևանքն էր ունենում, որ նրանք ամբողջապես հրաժարվում էին հասարակական զարգացման դաղափարից։

Իմպերիալիզմի ստադիայում կապիտալիստական հասարակության ճգնաժամը, ինչպես հայտնի է, զգալի կերպով փոփոխեց բուրժուազիայի սոցիալական հոգեբանությունը։ Նախկին մակերեսային լավատեսությանը փոխարինեցին խոր հոռետեսությունն ու սկեպտիցիզմը, որոնք իրենց հերթին որոշեցին այդ ժամանակաշրջանի բազմաթիվ պատմական հետազոտությունների ինչպես մեթոդները, այնպես էլ արդյունքները։ Ահա հենց այդ ժամանակ էլ վերածնվեց հասարակական շրջապտույտի հինավուրց կոնցեպցիան, որը և վառ կերպով արտահայտվեց մասնավորապես Շպենգլերի, իսկ մեր օրերում՝ Թոյնբիի պատմա-փիլիսոփայության մեջ։

Այդ կոնցեպցիաները XX դարի բուրժուական պատմագիտական մտքի խոր ճգնաժամի ամենաակնառու ցուցադրումն են։ Այդ ճգնաժամը չի կարելի շփոթել այն մեթոդոլոգիական ճգնաժամերի հետ, որոնք նոր հայտնագործությունների հետևանքով պարբերաբար տեղի են ունենում գիտության ամեն մի բնագավառում և որոնք շատ հաճախ նրա հետագա զարգացման ու կատարելագործման աղդակն են դառնում։ Մեր ժամանակների բուրժուական պատմագրության այդ ճգնաժամն ամենևին էլ ժամանակավոր երևույթ չէ, այլ, լինելով բուն իսկ կապիտալիստական սիստեմի ճգնաժամի գաղափարական արտացոլումը, գնալով ավելի ու ավելի է խորանում և ավելի ռեակցիոն գծեր է ընդունում, չնայած որ բուրժուական տեսաբանները հաճախ ճգնում են այն որպես գիտության վերջին խոսք հրամայել։

Արդի բուրժուական գաղափարախոսության ամբողջ վտանգն այն է, որ նրա ներկայացուցիչներն իրենց դասակարգային նպատակների համար իսկապես օգտագործում են գիտությունը։ Նորագույն նվաճումները և շատ հաճախ էլ հմտորեն շարաշահում են դրանք։ Դրա վառ ապացույցը հենց այն է, որ Շպենգլերի կամ Թոյնբիի տեսակետ։ դրույթներում մեծ դեր է խաղում պատմական գիտության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ պատմական զուգահեռության սկզբունքը։ Արտաքուստ ամեն ինչ ընդունելի և շատ գրավիչ է։

Չէ՞ որ մարդկության պատմության բոլոր հիմնական կուլտուրաններն իրենց նշանակությամբ հավասարեցվում են եվրոպականին, նրան համարժեք են հռչակվում։ Բայց բավական է այդ թեզի մի փոքր ավելի ուշադիր վերլուծությունը, որպեսզի միանգամայն պարզ դառնան նրա գիտական սնանկությունը և ռեակցիոն սոցիալական նպատակադրումը։ Չէ՞ որ հենց այդ թեզի օգնությամբ են Շպենգլերն ու Թոյնբին հետևողական կերպով հանդես գալիս համաշխարհային-պատմական առաջընթաց զարգացման գաղափարի դեմ։ Հիմնականն այստեղ այն է, թե ինչպիսի համապատասխան չափանիշ է վերցվում այս կամ այն պատմական պրոցեսներն ու երևույթները որպես իրար զուգահեռ ու հավասարարժեք երևույթներ առանձնացնելու համար։ Սակայն թե՛ Շպենգլերը և թե՛ Թոյնբին այս առնչությամբ այնքան ընդհանուր և ձևական չափանիշ են առաջ քաշում, որ բոլորովին անտեսվում է որակապես տարբեր դարաշրջանների սպեցիֆիկումը։ Նրանք կուլտուրաների, քաղաքակրթությունների զուգահեռության չափանիշ են համարում հասարակության դուրս գալը իր «պրիմիտիվ» կամ, այլ կերպ ասած, նախնադարյան-համայնական վիճակից։

Այսպիսով նրանք հավասարության նշան են դնում արդի կապիտալիզմի և անտիկ ստրկության միջև։

Սա Շպենգլերի, Թոյնբիի ֆորմալ մեթոդի միայն մի կողմն է։ Հիմք ընդունելով կուլտուրայի դրսևորման առանձնահատկությունը տարբեր ժողովուրդների մոտ, նրանք ամբողջապես իրար են հակադրում զարգացման խսկապես համասեռ, զուգահեռ պրոցեսները, տարբեր երկրների ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և, վերջապես, սոցիալիստական հարաբերությունները։

Նրանց տեսությունների խիստ պակասավորությունը մի ավելորդ անգամ համոզում է, որ համաշխարհային պատմության որևէ տեսական հարց անհնարին է գիտականորեն լուծել, առանց դիմելու հասարակական-տնտեսական ֆորմացիաների վերաբերյալ մարքս-լենինյան գիտությանը, արտադրական հարաբերությունների հասկացությանը։

Հասարակական բոլոր հարաբերություններից առանձնացնելով արտադրական հարաբերությունները, որպես հասարակական զարգացման մեջ հիմնականը և որոշիչը, Մարքսը դրանով իսկ գիտական բանալի է տվել մարդկության զարգացման ընթացքը ճիշտ հասկանալու համար, ինչպես նաև հսկայական հնարավորություններ է բացել պատմագիտական հետազոտությունների համար։ Մարքսիստական պատմագիտական կոնցեպցիայում արտադրական հարաբերությունները երկմիասնական դեր են խաղում, հանդես գալով մի կողմից՝ որպես միատիպ պրոցեսների կրկնելիության ընդհանուր գիտական չափանիշ, իսկ մյուս կողմից էլ որպես պատմական հաջորդական զարգացման, մեկը մյուսին հաջորդող դարաշրջանների որակական տարբերակման չափանիշ։ Եթե իրենց առաջին դերում նրանք կոչված են գիտականորեն ապացուցելու պատմական պրոցեսի ընդհանրականությունն ու միասնությունը և դրանով իսկ հանդես են գալիս որպես պատմական զուգահեռության չափանիշ, ապա երկրորդ դեպքում նրանք անհերքելիորեն արձանագրում են համաշխարհային-պատմական զարգացման փաստը, նրա առաջընթաց բնույթը։

Այսպես տրեմն, արդի բուրժուական պատմական կոնցեպցիաների հիմնական տեսական սխալներից մեկն այն է, որ դրանցում նույնացվում են տարբեր հասարակությունները, դրանք հայտարարվում են համարժեք ու հավասարարժեք՝ նկատի առնելով դրանց միայն զուտ ձևական հատկանիշները։ Նրանց մյուս արմատական սխալն այն է, որ պատմական առանձին կազմավորումները նույնքան ֆորմալ կերպով հակադրվում են իրար, այնպես որ տարբեր հասարակությունների, ասենք՝ Արևմտյան Եվրոպայի, Չինաստանի պատմությունը համարվում է միանդամայն անկրկնելի, յուրաքանչյուրը մի առանձին պրոցես, որը սոսկ իր կենսական ցիկլն է կրկնում բիոլոգիական օրգանիզմների նման։ Ահա այդ երկու հիմնական սխալներով են բնորոշվում Շպենգլերի ու Թոյնբիի ուսմունքները լոկալ կուլտուրաների, քաղաքակրթությունների մասին։

Թոյնբիի ուսմունքը հաճախ համարում են պատմա-մատերիալիստական տեսության հերքում։ Բուրժուական շատ տեսաբաններ փորձում են իրենց ընթերցողներին ներշնչել այն միտքը, թե լոկալ քաղաքակրթությունների ուսմունքն իբր թե հերքում է հասարակական-տնտեսական ֆորմացիայի հասկացությունը։ Այդպես կարող են կարծել միայն նրանք, ովքեր կամ գիտակցաբար ճգնում են կեղծել պատմա-մատերիալիստական կոնցեպցիան, կամ բնավ չեն հասկանում այն։

Համամարդկային քաղաքակրթության հետ մեկտեղ անշուշտ գոյություն ունեն նաև առանձին կուլտուրաներ, և անհեթեթություն կլիներ կասկածել այդ բանում։ Սակայն ամբողջ հարցն այն է, թե ինչպե՞ս ըմբռնել այդ հասկացությունները, ինչպիսի՞ բովանդակություն դնել նրանց մեջ։ Եթե ելնենք օբյեկտիվ իրականությունից, ապա դրանով կարելի է նշել որոշ, ուրույն ձևեր ունեցող այն կուլտուր-պատմական սիստեմները, որոնք գոյացել են զարգացման տերիտորիալ, տնտեսական, հոգևոր ընդհանրության հետևանքով։ Հենց այդ իմաստով էլ կարելի է խոսել հին եգիպտական, անտիկ, չինական, արևմըտաեվրոպական, արաբական և այլ քաղաքակրթությունների մասին։

Կուլտուր-պատմական սիստեմներն արտահայտող հասկացությունները հասարակական ֆորմացիայի հասկացությանը հակադրելը, ինչպես այդ անում են Արևմուտքում, անհեթեթ ու անօրինաչափ է թեկուզ զուտ տրամաբանական տեսակետից։ Բանն այն է, որ ֆորմացիայի հասկացությունն ընդհանուր բնույթի հակասություն է։ Հենց դրա շնորհիվ էլ այդ հակասությունը մեզ հնարավորություն է տալիս ըմբռնելու հասարակական-արտադրական պրոցեսի տարբեր ստադիաները և նրանցով որոշվող կուլտուրայի տիպերը, անկախ այն բանից, թե մենք Չինաստանի պատմության հետ գործ ունենք, թե անտիկ աշխարհի, Արևմտյան Եվրոպայի պատմության հետ և այլն։

Հասարակական-տնտեսական ֆորմացիայի հասկացությունը բացահայտում է ամենատարբեր ժողովուրդների պատմության միասնական բովանդակությունը և դրանով իսկ հնարավորություն է տալիս հետազոտության ժամանակ նրանց զարգացման համապատասխան էտապները դնել մի ընդհանուր, զուգահեռ շարքի մեջ։ Իսկ լոկալ քաղաքակրթության հասկացությունը բուն պատմական հասկացություն է, որով նշվում է պատմության ընդհանուր օրինաչափ պրոցեսների միայն սպեցիֆիկ, յուրահատուկ արտահայտությունը։ Մատերիալիստական ճիշտ մեկնաբանման դեպքում բացարձակ կերպով իրարից չեն անջատվի ժողովուրդների պատմությունները, ինչպես այդ կատարվում է Շպենգլերի կամ Թոյնբիի մոտ, որոնք նկատում են պատմական երևույթների արտաքին կողմը և չեն կարողանում տեսնել նրանց ներքին միասնական հիմքը։ Այնուհետև, կոնկրետ պատմական կուլտուրայի կամ քաղաքակրթության հասկացությունը դեռևս ցույց չի տալիս հասարակական հարաբերությունների տիպը։ Ճիշտ է, երբ մենք խոսում ենք, օրինակ, անտիկ կուլտուրայի կամ Առաջավոր Ասիայի հին քաղաքակրթությունների մասին, մենք դրանք դիտում ենք որպես որոշակի ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի տարբեր դրսևորումներ։ Բայց բավական է հիշատակել չինական կամ արևմտաեվրոպական քաղաքակրթության մասին, որպեսզի անհրաժեշտություն ղգացվի հետագա պարզաբանումներ կամ սահմանումներ տալու։ Ընդգծելով չին կամ եվրոպական ժողովուրդների կուլտուրական տրադիցիաների որոշակի միասնությունը, «քաղաքակրթության» հասկացությունը, այդ տերմինի տվյալ իմաստով, դեռևս ցույց չի տալիս, թե ինչ էտապներ են նրանք անցել իրենց զարգացման մեջ։ Այսպիսով, կոնկրետ պատմական քաղաքականության հասկացությունը միշտ չէ, որ սահմանափակվում է այս կամ այն արտադրանքով, և այդ իսկ պատճառով հատուկ կենտրոնացում է պահանջում։ Դրա ուղիղ հակառակն են ուզում ապացուցել բուրժուական տեսաբանները, որոնք, ելնելով իրենց դասակարգային սխեմայից, փորձում են բանն այնպես պատկերել, թե իբր բուրժուական հասարակության կործանումը

եվրոպական և այժմ գոյություն ունեցող մյուս քաղաքակրթությունների կործանում կնշանակեր։

Ոչ մի բան այնպես համոզիչ կերպով չի ապացուցում նրանց դրույթների տեսական սնանկությունը, որքան ինքը՝ պատմությունը։

Շպենգլերի կամ Թոյնբիի բուրժուական-հոռետեսական տեսություններն ամենից առաջ արտացոլում են դրանց հեղինակների ձգտումը՝ կապիտալիստական սիստեմի ճգնաժամը նույնացնելու եվրոպական կուլտուրայի և, դեռ ավելին, ամբողջ մարդկային քաղաքակրթության հետ։ Դա իր տեսական արտահայտությունը գտնում է այն բանում, որ նրանք հրաժարվում են կուլտուրայի, քաղաքակրթության ընդհանուր, տիպոլոգիական հասկացություններն օգտագործելուց, դրանք ամբողջապես փոխարինելով միայն կոնկրետ պատմական հասկացություններով։ Ոչ մի տարակույս չի կարող լինել տվյալ տեսակետի ռեակցիոն բնույթի ու դիտական սնանկության հարցում։ Միանգամայն անհեթեթ բան է, երբ կուլտուրայի լոկալ կոնկրետ պատմական սիստեմները շփոթում են ամենատարբեր ժողովուրդների համար ընդհանուր կուլտուրայի տիպերի հետ։ Այն փաստը, որ կապիտալիզմը և նրա քաղաքակրթությունը ծագել ու պատմականորեն առավել լրիվ կերպով զարգացել են Արևմտյան Եվրոպայում, մեզ հիմք չի տալիս այն մեկուսացնելու երկրագնդի տվյալ աշխարհագրական վայրի շրջաններում. ճիշտ նույնպես՝ այն փաստը, որ սոցիալիզմը, սկզբում հաղթանակել է Ռուսաստանում, չի կարող փաստարկ ծառայել սոցիալիզմը իբր թե զուտ ռուսական երևույթ հայտարարելու համար։

Կապիտալիստական քաղաքակրթության ճգնաժամը իսկապես միջազգային երևույթ է, բայց, հակառակ այն բանի, ինչ ճգնում էին և ճգնում են պնդել բուրժուական տեսաբանները, նա ընդհանուր առմամբ մարդկության սոցիալական կազմակերպության ճգնաժամը չէ։ Նրան օրինաչափորեն փոխարինելու է գալիս սոցիալական կազմակերպության նոր ստրուկտուրան՝ նոր, պրոգրեսիվ սոցիալական քաղաքականությունը։ Ահա այս է մարդկության արդի պատմական զարգացման հիմնական տենդենցը։